

18159

40000

891.99

4-68

6-1914

114/5

1914 № 1632

ԹԵՐՈՐՆ ՎԻՐՈՒԵԸՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

149  
2003

Կ Ո Յ Ր Ը

(Պ Ա Տ Կ Ե Ր)



391.99  
4-68

Ե Ր Ե Ի Ա Ն  
Տպարան „ԼՈՅՍ“ Ա. Յակովբեան և որդիք  
1914 թ.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ՊԱՐԹԻՆԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ՊԱՐԹԻՆԱՆ  
1925

ՏՆՆՈՒՄԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ՊԱՐԹԻՆԱՆ

5005

Գ Ր Ա Յ Ի Ը

(ԳՐԱԳՐԱԿԱՆ)



ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ՊԱՐԹԻՆԱՆ  
1914

Համար  
6114

ԺԵՐՐՈՒՆ ԳԻՐԱԳՐԱԿԱՆ

891.99  
4-68

ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ՊԱՐԹԻՆԱՆ  
ՎՈՐԻՍՏՈՎԵՃԻՆԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ ՄԱՍԻ  
ՍՍՍՐ

Կ Ո Յ Ի Ը

(ԳՐԱԳՐԱԿԱՆ)



Ե Ր Ե Ի Ա Ն  
Տպարան „ԼՈՅՍ“ Ա. Յակոբյանի և որդի  
1914 թ.

ՀԱՅԿՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
4000

ՆԻԷՐ ԻՄ ՔՈՅՐ՝

ՕՐ. ԱՐՈՒՍԵԱԿԻՆ.

(908888)

50512-պի

Հեղինակից:



36427-66

Կ Ո Յ Ր Ը

Նա խոչընդոտների կհանդիպի, որը կհանքի  
Մանսպարնոլ կընթանայ միշտ կուրթին...

Յունիսեան առաւօտներից մէկն էր.  
արեգակը իր տաշին ճառագայթները նոր  
էր գցել երկրի վրայ, հեռու արեւելքից:  
Քնութիւնը հետզհետէ սկսում է կեանք  
ստանալ. թռչունները, մրջիւնները իրենց  
բներից, գաղանները իրենց սրջերից սկսում  
են դուրս գալ: Մայրիկ զարթնում են և  
ամեն մէկը սկսում է իրեն գործով պա-  
րապել:

...ի... քաղաքի յետ ընկած թաղերից  
մէկ խարխուլ խրճիթից դուրս եկան մէկ  
մարդ և մէկ կին: Մարդը ծերունի էր.  
տարիքով 60-ից անց, Իսկ կինը այրի էր,  
հագիւ 30 տարեկան: Նա վերոյիշեալ ծե-  
րունաւ աղջիկն էր: Եւ նրանք խրճիթից  
դուրս գալով, աղջիկը հօր ձեւը բռնած,

տառչնորդում էր: Նրանք գնում էին այդ քաղաքի մէկ փողոցով: Եւ ահա նրանք քաղաքից դուրս եկան: «Քաղաքից դուրս եկանք» հարցնում էր ծերունին անդադար աղջկան: «Ոչ» պատասխանում էր աղջիկը, երբ նրանք դեռ ևս քաղաքումն էին: «Քաղաքից դուրս եկան» հարցրեց վերջին անգամ ծերունին: «Այո, դուրս եկանք, հիմի սա գիւղի ճանապարհն է» — դէ՛հ կարող ես գնալ սաաց հայրը աղջկան:

— Ախր հայրիկ փնց պիտի գնաս գիւղը ոչ մի մարդ հետդ չկայ. գիւղը հեռու ճամբան վատ, սայլ երևայ, ի՞նչ պէտք է անես: Ասաց աղջիկը տխուր ձայնով և ցաւակցական դէմքով նայելով հօրը:

— Կգնամ, կգնամ, ի՞նչ կայ. հազարը գնում երկու հազարը գալիս:

— Ո՛ր է, մարդ դնացող չկայ:

— Տօ հմի ճամբէքը լիքն են. մէկ էլ հօ առաջին անգամ չի, որ գնում եմ: Գնա, գնա, երեխէքը լաց կլինեն: Նրանք երկուսն էլ կանգնած էին Գ... գիւղի ճանապարհի վրայ: Երկուսն էլ պահ մի լուռ ին: Աղջիկը շարունակ նայում էր ճանապարհի վրայ:

Իմանալու, Գ... գիւղը գնացող մարդ կնց: Քայց ոչ ոք չկամր...

Դէ՛հ հայրիկ ջան էլ չեմ ասում, զգոյշ կաց. սայլ գալուս մի կողմում լանգնի, մինչև նրա անցնելը:

— Տօ հօ ես երեխայ չեմ, դնա, երեխէքը լաց կլինեն. Աղջիկը, վերջին անգամ նայեց հօրը «դէ՛հ գնում եմ» ասացնա, յետ դառաւ և ուղևորեց դէպի տուն: Ծանուպարհին նա ստէպ-ստէպ կանգնում էր և դէմքը յետ դարձնելով, նայում էր իր հօրը: Մի քանի անգամ կրկնում է, մինչև ծերունու աննկատելի դաճնալը: Ծերունին բաւականին հեռացել էր:

Ծերունին կոյր էր. նա կուրացել էր չորս տարի առաջ: նրա կինը շուտուց մեռել էր. և նա այժմ բացի երկու աղջկանից ոչինչ չունի. մէկը վերոյիշեալ այրին, իսկ միւսը Գ... գիւղում ամուսնացած: Կուրացած ծերունին իր օրերը անց է կացնում երբեմն մի, երբեմն միւս աղջկայ մօտը ապրելով: Վերոյիշեալ այրին, ծերունու աղջիկը, իր ամուսնու մահից յետոյ լացք և

զրո նման աշխատանքներով պարապելով՝ պահում էր իր կուրացած հորը և երկու անչափահաս որդոց: Իսկ միւս աղջիկը Գ... զբւոյնում ամուսնացած, այնտեղ էլ ապրում էր: Ձով էր լինում Գ. գիւղը ամրանը նա դառնում էր Ի... քաղաքից մօտ 13 վերստ հեռավորութեան վրայ: Եւ միշտ, երբ ամռանը ձերտնին գնում էր գիւղ, աղջկայ մօտ ապրում, իսկ երբ անցնում էին ամրան տաք օրերը, նա վերստին վերադառնում էր քաղաք...

Եւ հնա այժմ քաղաքում շողից տանջւելով, ցանկանում էր գնալ Գ... գիւղը...

Նա իր վերջին տարիներում ոչ թէ միայն տեսողութիւնից էր զրկւել, այլ և նրա ականջները լաւ չէին լսում. յիշողութիւնը թուլացել, ձերութիւնից նիհարել, (դուցէ և վատ սնւելուն վերագրել) և կմախք դառել: Դէմքը գունատւել, ձեռքերը դողողոյն և դատողութիւնն էլ նւաստացել:

Նա դառել էր կատարեալ կոյր. ոչինչ չէր տեսնում, շատ քիչ բան լսում, լսածը գժւար ըմբռնում: Շատ քիչ նպատակ ունէր

Նրա ապրելը. նա ապրում էր, իր գոյութիւնը լոկ Ֆիզիքապէս պահելու համար... Եւ ամեն վարկեան բնութեան զաւակները, թէ կենդանի և թէ անկենդան մարմինները նայում են նրան, հեգնում, և կարծես, ընդմիջտ հետեւեալ բառերն են շշնջում. «էլ քնչ ևս ապրում դու այս աշխարհում, նպատակ չունի էլ քո ապրելը»... Եւ կարծես ինքն էլ զգում էր այդ. բայց չէր ցանկանում գեռ ևս մեռնել... Աշխարհը ճիշտ է, գառել է նրա համար ունայնութեան մէկ փոս, մէկ մութ ու նեղ դերեզման, ուրդեղ ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր զգում, բայց լոկ կենդանական շշուկներ էին զարնում նրա ականջներին: Նրա համար ամեն ինչ լսողութիւն էր...

Բայց նա դեռ ևս ցանկանում էր ապրել.

Արեւը հետզհետէ սկսում է բարձրանալ. ձերտնին աշխատում է շտապել, և որքան հնարաւոր է, շուտ գիւղ հասնել: Բայց գժւար էր նրան շտապել. չէ որ նա կոյր էր և փայտը ձեռին պահած, նրանով էր իմանում, որտեղ քար կայ, որտեղ փոս է, և

որանց հարթ... փայտն էր նրան ճանապարհ  
ցուցնում: Եւ նա յոյսը դրել էր այդ փայտի  
վրայ, որը խորդ ու բորդ ճանապարհով  
պէտք էր հասցնէր Գ... գիւղը: Եւ փայտը  
նրա համար մէկ օժանդակ գործիք էր. մէկ  
խորթ, օժանդակ գործիք: Ուստի պէտք է  
զգոյշ լինել, նրան չպէտք է միանգամայն  
հաւատալ, նա կարող է ճամբան շեղել և  
մարդուն մոլորութիւնների մէջ գցել...

Արևը բաւականին բարձրացել էր. ծե-  
րունին ճանապարհի կիսին հազիւ էր հասել:  
Բաւականին հոգնել էր. մէկ քար է գտնում  
նստում է, հանգստանալու համար: Նա  
զէմքը ուղղում է դէպի արևը, աչքերը լայն  
լայն բացում, — չգիտես ինչո՞ւ: Արևի տակ  
նրա զէմքը տաքանում է. նա ցածրաձայն  
մըմնջում է. «փսփոք քեզ Աստուած»: Ապա  
լուում է, գլուխը կախում և խորասուզում  
մտքերի մէջ: Յանկարծ նա լսում է մարդ-  
կանց ձայներ (մինչև այժմ նա ոչ մի ձայն  
չէր լսել): Մարդիկ գալիս էին փոքր ինչ  
հեռուից. ծերունին աշխատում է իմանալ, թէ  
ինչ ձայներ են դուրս, ովքեր են խօսողները

ծանծթ մարդիկ են, և այլն... Բայց իզուր...  
ծերութիւնը դաւաճանում է...

Չայները հետզհետէ աւելի լսելի ին  
դառնում նրան. խօսակցողները մի խումբ  
զիւղացիներ էին, որոնք գալիս էին մօտա-  
կայ կիւղերից: Նրանք մօտեցել էին ծերու-  
նուն: Այժմ ծերունին լսում է նրանց ասած  
բառերը և հասկանում: Նա աչքերը լայն  
բացում է, դէմքը ուղղում դէպի նրանց, և  
սպասում, թէ նրանք կբարեկեն: Բայց գիւ-  
ղացիները նայում են նրան, ոչինչ չեն աս-  
ում, և անցնում են ու հեռանում. Մերու-  
նին դարձեալ գլուխը կախեց. խորը հոգեց  
հանեց, և դա լծեալ խորասուզեց մտքերի  
մէջ: Փոքր ինչ յետոյ սթափուում է, կանգ-  
նում է տեղից, և սկսում է ճանապարհը վե-  
րստին շարունակել...

Ճանապարհին ծերունին յանկարծ կա-  
նգնեց. նա պահ մի շփոթութեան մէջ ընկաւ...  
պաղ քրտինքը պատեց նրա ամբողջ մար-  
մինը: Նա լոււ էր, և իր ամբողջ լսողու-  
թիւնը սկսեց լարել, լսելու, թէ մարդկային  
ձայներ կրկին չեն լսում: Բայց ոչինչ չսեց

Նրա շուրջը տիրում էր խորին լուսթիւնը։  
Չէր լսւում նոյն իսկ թռչունների ձայները,  
միայն ամառային արևն էր իր ճառագայթ-  
ներով այրում նրան։ Նա մնաց շւարած, չի-  
մացաւ ինչ անել...

Ծերունին գիւղի ճանապարհը շնորհ էր-  
նա այժմ այն ճանապարհի վրայ չէր գտնւում  
որը պէտք էր տանէր Գ... գիւղը։ Այժմ նա  
գտնւում էր մի այլ ճանապարհի վրայ, մի  
այլ խորթ ու անծանօթ ճանապարհի վրայ,  
որով երբէք չէր կարելի ընթանալ. միտք  
չունէր նրա վրայով ընթանալը. նա չէր  
հասցնի նրան այն տեղը, որտեղ ինքն էր  
ցանկանում։ Խորդ ու բորդ էր այդ ճանա-  
պարհը. խոր-խոր ձորերով, բարձր բլուրնե-  
րով, կածաններով էր անցնում այդ ճանա-  
պարհը։ Եւ նրա վրայ մեծ ու փոքր քարեր  
անպակաս, որոնք կանգնած իրար մօտիկ,  
անհելի դէմքով, ահ ու սարսափ ազդում  
ճամբորդի վրայ, և վերջինի առաջ ընթանալը  
վտանգաւոր դարձնում...

Պարզ է, որ ծերունին այդպիսի ճա-  
նապարհով չէր կարող ընթանալ. ամեն մի-  
քայլափոխում նա խոչընդոտների կհանդի-

պէր։ Չէ որ նա կոյր էր, ոչինչ չէր տես-  
նում, չէ որ ծերութիւնից Ֆիզիքապէս թու-  
լացել, և ամենաթոյլ հակառակորդին չէր  
կարող ընդիմութիւն ցոյց տալ։

Եւ նա մնաց լուռ և շւարած, չիմացաւ  
ինչ անել... կրկին յետ դառնալ, Գ...գիւղի  
ճանապարհը գտնել. բայց շատ էր հեռացել  
այն ճանապարհից Էհ, որտեղ էր թողել  
նրան... Շատ հեռու... Եւ դժւարութեամբ  
կարող էր յետ դառնալ և այն ճանապարհը  
գտնել։ Բայց ինչ անել շարունակել այդ  
ճանապարհը. բայց ինչ անել շարունակել  
հասցնիլ նրա ձգտով ծայրը։ Նա այդ ճանա-  
պարհի վրայ էր կանգնած, որ եթէ շարու-  
նակէր, վտանգաւոր կլինի, իսկ յետ դառնա-  
լը միանգամայն անհնարին։ Եւ ծերունին  
չէր կարողանում մի ելք գտնել, մի ելք  
գտնել և ընթանալ. հարկաւոր էին մարդիկ  
նրան մի ելք ցուցնելու... Բայց մարդիկ  
չկային, նրանք չէին երևում...

Բայց արևը այրում էր անգթօրէն.  
քրտնքի կաթիլները մէկիկ-մէկիկ թափւում

էին ծերունու խորշումած ճակատից...

«Փնւշ աշխարհ, փնւշ աշխարհ» մըմնջում էր մէկուսի ծերունին ցածր և անլսելի ձայնով: Նա տրտնջում էր իրեն կեանքից: Նա իրեն համարում էր ամենադժբախտներէց մէկը, որ իրեն կեանքի վերջին օրերը անց է կացնում տխուր ու տրտում, իրեն դժբախտ է համարում, որ զրկուել է բնութեան ամեն մի գեղեցկութիւնից ոչինչ չէ տեսնում, և ամբողջ կեանքը նրա համար լոկ լսողութիւն է դարձած:

Բայց արևը այրում էր նրան շարունակ. ծերունին տանջւում էր արևի այրող ճառագայթներից... Պէտք է մի ելք գտնել... Եւ անա նա Աստուծուն աղօթելով, ամեն ինչ իր ճակատագրին վերագրելով, շարունակում է ճանապարհը, յուսալով, թէ Գ... գիւղը կգտնի:


Ծերունին աւելի վարթար տեղ ընկաւ մի սոսկալի տեղ: Երկու կողմը գտնւում էին խոր անդնդանման ձորեր. մէկի յատակից շուտով էր գետակի խուլ ձայնը: Ծանա-

պարհը լցւած էր էլ աւելի մեծ քարաժայռերով: Ծերունին դարձեալ կանգ առաւ. յուսահատւած և լքւած: Ի՞նչ անել, մտածում էր ծերունին. ճանապարհը առաջանից էլ աւելի վատթար էր դառել: Այս անգամ նա էլ չէր կարող քայլերը փոխել: Վախենում էր, սարսափում էր, լսում էր գետակի ձայնը, իմանում էր, որ այդտեղ գտնւում է մէկ ձոր, մէկ խոր և սոսկալի ձոր: Նա դարձեալ լսողութիւնը լարեց, մարդկային ձայներ լսելու: Բայց ոչ մի ձայն չէր լսում: Երբեմն երգեցիկ փոքրիկ թռչունները երգում էին և ուրախ ուրախ թռչկոտում էին մէկ քարից դէպի միւսը: Ծերունին լսում էր անց ձայնը և մէկուսի շնջում. «է՛հ, երանի՛ ձեզ, երանի՛ ձեզ»:

Եւ նա մնաց լուռ և շարած. Ժամերով մնաց կանդնած. շիրեն կորցրածօրեպէս չիմացաւ, ի՞նչ անել...

Նա չէր կարողանում մի ելք գտնել...

Արևը հետզհետէ մօտենում էր իրեն վախճանին. երեկոն մօտենում էր, ծերունին



քաղցից ասնջուում էր, ու տանջուում: հաց  
չունէր իր մօտ ուտելու և քաղցը յանգե-  
ցնելու: «Ի՞նչ անեմ Տէր Աստուած» ասաց  
ձերունին վերջապէս բարցրածայն: Յուսա-  
հատութիւնը ծայրայեղութեան հասաւ. ձե-  
րունին սկսեց լալ, արցունքի կաթիլները  
կախուեցին նրա աչքերից. գլուխը, և կոնք  
առան նրա թօշնած և թախծոտ դէմքի վրայ  
նա սկսեց հեկեկալ, և երեխայի պէս  
լաց լինել:

Երկար ճանապարհ գալով, յոգնել, ու-  
ժասպառ էր հղել: Գտաւ մէկ քար, դարձեալ  
նստեց. բայց քարը արեւից այնքան էր տա-  
քացել, որ ձերունուն սկսեց այրել: Ծերու-  
նին գրպանից հանում է իր հնամաշ թաշկի-  
նակը և արձունքով օժեած դէմքը մաքրում:  
Ապա գլուխն աւնում է ձեռքերի փեթի  
մէջ և սկսում է իր դրութիւնը ողբալ:

Դարձեալ մարդկային ձայներ չէին  
լսում: Բնութիւնը հետզհետէ խաղաղուում  
էր: Թռչունների ձայները նւազում: Երե-  
կոյեան մեղմիկ զեփիւռը սկսեց խաղալ, ձե-  
րունին փոքր ինչ զով զգաց:

Բայց քաղցը տանջում էր նրան. կրկին  
կանգնեց տեղից:

Ոտքերը սկսեցին դողդողալ: Կրկին  
ճանապարհը շարունակեց:

Բայց... մի քանի քայլ առաջ չգնացած,  
առքը մէկ քարի առաւ, վայր ընկաւ, ճա-  
կատն առաւ մէկ այլ քարի, սկսեց տաք  
արիւնը հոսել...


Ծերունին մի քանի թոյլ շարժումներ  
արաւ, ուղից կրկին կանգնել, բայց իդուր...  
ձերութիւնը դաւածանեց...

Գրւած է՝ 1913 թիւ, փետրւար,  
Երևան.



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



Handwritten or stamped text, possibly a date or number, partially obscured.

ТОПОГРАФИЧЕСКИЙ ИНСТИТУТ  
ДОСТОПОВЕДЕНИЯ  
Академия наук  
СССР

10 ф. . . . .  
10 ф. . . . .  
7 ф. . . . .  
4 ф. . . . .

1955 г. 4 янв.  
АКАДЕМИЯ НАУК  
СССР

Всесоюзный институт географии  
Академия наук СССР

18159

Համ  
6114

գրք

17109

ՀՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ  
ԾԵՐՈՒՆ ՎԻՐԱԲԵԱՆԻ  
1933

Մեղեդիներ «սպառուած» . . . . .	10 կ.
Էջի դերձակ վօղ. մէկ արարւածով . . . . .	10 կ.
Միսաք . . . . .	7 կ.
Կոյրը (պատկեր) . . . . .	4 կ.

ԳԻՆՆ Է 4 ԿՈՊ.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

Ցանկացողները դիմեն հեղինակին, կամ  
հայ գրավաճառներին:  
Հեղինակի հասցէն՝ Эривань Астафьевская № 82.

*Զար*

2013

